

## ԳՐԱԿԱՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

## V

Փարիզ եւ Պօլիս:—Արեւիկ Զոպանեան եւ Ադամ Եար-  
նանեան:—Նոր տղանդ՝ Միսաք Մեծարեւոյ:—Վահրամ  
Թաթուլի ոտանաւորը եւ Ե. Թօլայեանի նմանադուքիւնը:

## Ա.

Ամէն անգամ երբ կարդում եմ Ա. Զօրանեանի  
քննադատական յօդուածները եւ նախանձում եմ նրա  
ճօն լեզուին, նրա ունեցած բազմակողմանի տեղեկութիւն-  
ներին մեր հին և նոր, արեւելեան և արևմտեան հայ  
գրականութեան մասին: Նա քաջ ծանօթ է և օտար գրակա-  
նութիւններին. ես մինչև իսկ կործում եմ, որ նրանից  
աւելի լաւ իմացող արդի ֆրանսական գրականութիւնը  
հազիւ թէ մենք ունենք մի ուրիշը: Նա ունի գրիչ, նա  
ունի ճաշակ. գրական գեղարուեստական քննադատութիւ-  
նը, իմ կարծիքով նրա իսկական ասպարէզն է: Նրա գրած-  
ները նարեկացու, Քուչակի, Պէշիքթաշեանի մասին անյետ-  
չեն կարող կորչել մեր գրականութեան մէջ:

Բայց բանաստեղծ է արդեօք պ. Արշակ Զոպանեանը.  
կասկածելի է: Երկու անգամ կարդացի եւ նրա նորերս հրա-  
տարակած Քերթուածներ անունը կրող բանաստեղծու-  
թիւնները ժողովածուն և ոչ մի բաւականութիւն չտաացայ:  
Ծիշդ է հարիւրից աւել մանր ու մեծ ոտանաւորների մէջ

կան շնորհալի կտորներ, բայց նրանք կորչում, կարելի է ասել՝ տարրալուծում են ընդհանուր անկենդանութեան մէջ: Ես տեսնում եմ այստեղ և խելք, և ճաշակ, և զգայուն սիրտ, և հարուստ լեզու, և արհեստ, բայց արուեստ, պօէզիայ, այն անկեղծ պարզութիւնը, որի կենդանարար ջրով պէտք է սրսկուած լինի ամէն մի իսկական բանաստեղծութիւն—ես չեմ տեսնում կամ լաւ է ասած՝ շատ քիչ եմ տեսնում:

«Արեւալոյս» բաժանմունքի առաջին ոտանաւորը հետեւեալն է՝

Կը վերածնի հուրն Ոչընչին արդանդէն:

Կը կարմըրին կատարները լեռներուն:

Կը հագնի ծովը ծիրանի սաքոքուուն:

Սյգուն սլաքներն են որ գիշերն կը քանդեն:

Կը կարմըրին կատարները լեռներուն:

Բոցեր կժայթքեն երկնքին մռայլ անդունդէն:

Սյգուն սլաքներն են որ գիշերն կը քանդեն,

Պատուելով մութն ու վանելով զայն հեռուն:

Բոցեր կժայթքեն երկնքին մռայլ անդունդէն:

Կը ցընդի ստուերն ալիքներով գալարուն:

Պատուելով մութն ու վանելով զայն հեռուն,

Արեւը դուրս կը նետուի խոր իւր բանտէն:

Կը ցընդի ստուերն ալիքներով գալարուն:

Կարթըննայ սիւրն ու թըռչուններն կը քերթեն:

Արեւը դուրս կը նետուի խոր իւր բանտէն:

Քաղցրը պահն է՝ կեանքի զարթօնքն է սիրուն:

Արդեօք պրօֆան ընթերցողը նկատեց ինչու՞ն է կայանում այս ոտանաւորի տարօրինակութիւնը: Ահա թէ ինչու՞մ: Հայ պառնասականը արուեստօրէն ամէն մի հետեւալ տունի մէջ կրկնում է նախընթացի երկրորդ և չորրորդ տողերը և այնպէս, որ նախընթացի երկրորդը դառնում է հետեւեալի առաջին տողը, իսկ չորրորդը—երկրորդ: Բայց ինչ դուրս եկաւ դրանից, ոտանաւորը դրանից ոգի ու թռիչք չստացաւ, այլ մնաց նոյնը, թէպէտ և բաւականի պատկերաւոր: Արդէն այս ոտանաւորը բա-

ւականին շինած է, իսկ կան այնպիսիները, որ բանաստեղծը յատկապէս նստել շինել է—շինելու համար։ Դրանք աշխարհ են եկել գլխից և ոչ թէ սրտից, զգացմունքներից։

Անարգարութիւն կլինէր ի հարկէ այստեղ ցոյց չտալ և այն ոտանաւորները, որոնք բանաստեղծի սրտից բըզխելով և անկեղծ զգացմունքով ցոյցուած լինելով ականայ գրաւում են ընթերցողի ուշադրութիւնը։ Ահա մի տենչոտ ոտանաւորի առաջին տունները՝

Կը նախանձեմ երջանիկ

Հզգեսաներուդ, որ մօտէն

Իրենց ծաւրին մէջ փափկիկ

Քու մարմինըդ կը գըրկեն։

Կը նախանձեմ սիւքերուն

Որ մաղերդ կը շոյեն,

Ամբիժ առաղին իսկ սիրուն

Որ կը ժըպտի քեզ վերէն։

Բայց ոտանաւորը երկարացրած է և ի վերջոյ ձանձրալի է դառնում։

Սիրուն ոտանաւոր է նոյնպէս գիւեերին մէջ՝

Գիշերին մէջ ծովաւի գացի

Ու սե տեսայ ջուրերը լուռ։

Ու սե ջուրերն ըսին ինձի

« Եկուր, եկուր . . . »

Այստեղ կայ որոշ տրամագրութիւն, որը ընդունակ է ընթերցողի մէջ հս նոյնպէս տրամագրութիւն ստեղծել— իսկ դա ամէն մի գեղարուեստագէտի նպատակը պէտք է լինի։

Բայց, օրինակ, ինչ ասենք գրեթէ նոյն երեսի վերայ զետեղուած ցայգերգի մասին, որի բովանդակութիւնը շատ հեռու է Nocturne յիշեցնելուց։ ահա մի նմուշ այդ բանազրօսիկ ոտանաւորից՝

Հո՞ծ մարդկութիւն մը, անորոշ, անճանօթ,

Զօրդիս կռուայ կը խնդայ։

Սըճարանին քրանած օդին մէջ հեւքոտ,

Ուր կը վառին սուրտ շըրթունքներն էգերուն

Արուներու նայուածքին տակ մոլորուն,  
 Յաժ հրրճուանքի խրժուկ մ'յամառ կը թընդայ.  
 Ու հոգիիս պազ պարապին մէջ ազօտ  
 Զանձրոյթ մը խուլ կը հռնդայ:

Եւ այսպէս մի քանի տաանեակ տողեր ու ոտանաւորներ, որոնցով Արշակ Զոպանեանի նման ընդունակ և տաղանդաւոր հայը իր տուրքն է տալիս Բողբէլների ու Վերլէններու քնարին:

## Բ.

Բայց ով կատարելապէս տարուած է Ֆրանսիացի դէկադէնտներով, սիմբոլիստներով և տարօրինակ ճաշակի մօդէսիստներով—Ադամ Եարճանեանն է: Սրա բանաստեղծութիւններն էլ Փարիզումն է լոյս տեսել, ուստի և զարմանալի էլ չէ ֆրանսիականի ազդեցութիւնը, թէպէտ և ցանկալի կլինէր, որ մերոնք օտարի լաւ կողմերից ազդուէին և ոչ թէ անմարսելի դատարկութիւնից, Նոյն Բողբէլն և Վերլէնը, ինչպէս նաև Էդգար Պօ, Մէտէրլինգը, Մալարմէն, Վիլիէ տը Լիլ Ադանը, Ռօդէնբախը, վերջապէս Վէրհարնը և այլք ունին հիանալի բանաստեղծական կտորներ—ինչո՞ւ նրանցից չ'ազդուել և մինչև իսկ չ'թարգմանել: Ոչ, պ. Եարճանեանը ընկնում է հիւանդոտ գրականութեան ազդեցութեան տակ և տալիս մեզ «Հոգեվարքի եւ յոյսի ջանքեր» որ չգիտես ինչ տեսակի գրուածք է՝ արձակ ասես—արձակ չէ, ոտանաւոր ասես—ոտանաւոր չէ: Եւ եթէ հեղինակը չի ուզում չափ պահպանել—ինչ հարկ կայ ոտանաւորի պարտագիր ձեւը պահպանել: Հեղինակը բառերի մեծ պաշար չափ ունի, բայց նա դրանով չի բաւականանում և այնքան նոր բառեր է յօրինում և վրայ-վրայ կուտակում, որ ընթերցողը ապշած մնացած՝ չի իմանում ուր է կորել միտքը, դադարարը: Յակամայից յիշեցի ծանօթ աֆօրիզմը՝ «բառերը մեզ տրուած են մեր մտքերը ծածկելու համար»: Իսկ զգացմունքի մասին ես չեմ էլ խօսում, ես այդ գրքի

մէջ զգացմունք չտեսայ և ոչ էլ ճաշակ, թէպէտ և Ռուբէն Զարգարեանը յառաջաբանում, իսկ պ. Ա. Ահարոնեանը մի բանասիրականում աշխատում էին համոզելու, որ Ադամ Եարճանեանը ազգային հանճար է, հաւատացողը թող հաւատայ, իսկ ես կրեմք մի քանի նմուշներ ցոյց տալու համար Եարճանեանի քնարի հիւանդոտ տալօրինակութիւնը:

#### Աւերումի գիտեր.

Բոլոր վերաւոր և մահաբաղձ հոգիներն, այս իրիկուն,  
Վերջալոյսին մոխիրներուն վրայ յուսահատօրէն հակած՝  
Իրենց սարսափը և վերահաս աղէտքը կուլան .... և այլն:

#### Ա Ր Ի Կ

Դժգունօրէն յոյսին բոլոր շուշանները թափեցան,  
Որերուն անգթութեանը մարմարներէն ի վար,  
Մահազուժօրէն և անդադար.  
Եւ արբշիւ և ուխտուած հոգիները այլ ևս հանեցին,  
Իրենց յաղթանակի եւ երազի վերաբերուն երկար,  
Դերեղմանուող իրիկուններուն հետ,  
Եւ աւերում համայնապատկերին դիմաց  
և այլն և այլն

Մի երկու այսպիսի պատկեր, մի երկու այսպիսի տող բանաստեղծութեան մէջ դեռ հասկանալի է, բայց եթէ այսպէս հարիւրաւոր տողեր են չարում—դա արդէն զսուանցանքի տպաւորութիւն է թողնում և ոչ թէ հեղինակի ցանկութեան համեմատ տխրութիւն և արցունք է առաջացնում մեր մէջ—այլ ծիծաղ և ձանձրոյթ:

Եւ այս ճոխ լեզուն և բազմաշող պատկերաւորութիւնը կորչում են իզուր, աննպատակ, որովհետեւ նա ընթերցող չի գտնի: Եւ ինչո՞ւ. որովհետեւ հեղինակը ստրուկ է մօգայի, մօղէսնիղմի, որունք պարզ պօէզիան մի կողմ թողած և զգացմունք և բանականութիւն զոհ են բերում սիմբոլների կուտակման, զխտակցական տարօրինակութիւններին:

Իսկ հետեանք՝ oleum et diem perdididi ...

## Գ.

Յաւալին այն է, որ Ա. Եարճանեան մենակ չէ. կան  
և ուրիշները — մանաւանդ Պարիզում և Պոլսում:

Կայ դրանց թուում մէկը՝ Միսաք Մեծարենց, որը  
Ծիածանից յետոյ տուել է նոր տաղեր: Պէտք է ասել,  
որ Պոլսում շատ աւելի են հետաքրքրուում գեղարուես-  
տական գրականութիւնով, քան թէ մեզ մօտ: Այնտեղ,  
օրինակ, «Զիֆթէ Սարաք»ի գրուածքի առթիւ ահագին  
բանակուիւ տեղի ունեցաւ պարբերական մամուլի մէջ.  
Մ. Մեծարենցի անունը մի քանի ժամանակ բոլոր հոլով-  
ներով հոլովում էին: Ես չեմ կարդացել նրա բանաստեղ-  
ծութիւնները, բայց\*) Յակոբ Տէր Յակոբեանին հաւա-  
տալով կարծում եմ, որ տաղանդաւոր բանաստեղծ է  
լինելու Մեծարենցը: Յօդուածի մէջ բերուած օրինակներն  
էլ ցոյց են տալիս, որ երիտասարդ բանաստեղծը թէ-  
պէտ և սիրում է խօսել սիմբոլներով (խորհրդանշով —  
ինչպէս ասում է յօդուածագիրը) ու տարօրինակ ձևեր  
ունի, բայց ունի և զգացմունք և աւիւն և նուրբ արտա-  
յայտութիւնների շնորհք՝ օրինակ —

Երեկ դիշեր մոռցեր էիր լուսնակ, դիտե՛ս

Երեկ դիշեր մոռցեր էիր պատուհանիկս իմ համեստ,

Պատուհանիկս իմ անաս՝

Ու մութ մը գորշ վիճակի պէս էր կախուեր ...

Յօդուածը վերջանում է հետևեալ եզրակացութեամբ

«Մեր սերունդը ուրախ է որ իր մէջ կրնայ ցոյց տալ  
բանաստեղծ մը որուն քով Երեւակայութիւն, Զգացում  
ու Արուեստ ձեռք ձեռքի, հաւասար եղբայրակցութիւնով  
մը կը խանդավառին, և որուն քով Գաղափարն ալ իր  
նշոյլներով կ'օսկեղօծէ հորիզոնը, գաղափարը՝ որ անայլայլ  
նշանակէտը պէտք է ըլլայ գրականութեան և արուեստին»:

Այլ կարծիքի է «Արևելք»ի Փայլակ յօդուածագիրը. \*\*)

Տես մտաւորական կեանք յօդուածը Մանգումիի Էֆքեսարի,  
№ 4994.

\*\*) Տես Արեւելք, 1908 թ. № 6757.

նա ոչ մի արժէք չի գտնում՝ Մեծարենցի քնարի մէջ։ Սակայն կատելու է յօդուածագիրը բաւականին բծախնդիր է և ճաշակի կողմից էլ ոչ այնքան հարուստ օրինակ։

Արեւ ծիծաղի, ծաղիկ ծամերու տողի մէջ «խուժալուր նոյնակայնութիւն է» գտնում։ Մեծարենցը պէտք է աշխատի ապագայում՝ աւելի մօտենալ ժողովրդին և թէ լեզուն և թէ արտայայտուելու ձևով մօտենայ բուն ժողովրդական երգիչներին, շարունակելով իր գաղափարների ու զգացմունքների համար արտափայլումներ գտնել սիմբոլների մէջ։ Բայց գեղարուեստը չափ ու սահման է պահանջում և ով որ անցնում է այդ սահմանը, նա տուժում է, Չպէտքէ անցնի այդ սահմանը և Մեծարենցը, եթէ ուզում է, որ նրան կարգան և հասկանան։ Փոքրամասնութեան համար գրելը, ստեղծելը—գերեզման մտնել է։

## Դ.

Հստ երևոյթին այդ չի ուզում հասկանալ Վահրամ Թաթուեանը, որը Պօլսում հրատարակուող «Լոյս» շաբաթաթերթի 14-րդ համարում զետեղել է Ծառերուն սակ վերտառութիւնը կրող ստանաւորը, որը և նոյնութեամբ բերում եմ այստեղ

### Ծառերուն սակ.

Այնքան բարակ,  
Երկնք մը ծուխ կը տարտնէ,  
Այնքան բարակ:  
Ծովն ալ հմն է, ձորէն անդին,  
Սարակն ի վար,  
Ծովն ալ հմն է, այնքան հանգաւտ,  
Այնքան եղբայր՝  
Այնքան եղբայր իմ երազիս:  
Մակոյկի մը խորհուրդն ալ հոն  
Կը տարագրի գիշերին մէջ  
Քաղցր ու հանգարտ:

Ու լուսինկան,

Որուն արծաթը կապտորակ՝

Կը սորսորի, այնքան բարակ.

Ծառերն իվար, այնքան բարակ.

Ու լուսինկան, որուն խոսքս

Կը խնկէ ծուխն իր պատարագ,

Ու լուսինկան, ձիւնէ՛ համակ,

Իր գգուանքով լայն ու ճերմակ,

Ծործրակիդ շուրջ կը յօրինէ,

Ծործրակիդ շուրջ, համակ ձիւնէ,

Մեհեւանդ մը—մի մարբութիւն—

Մեհեւանդ մը, այնքան բարակ,

Այնքան փշրուն,

—Չքնաղ ինչպէս լուսապըտակ:

Լուսաւորի ցոլքեր թռչուն,

Այնքան բարակ,

Երգերուդ մէջ կիտէանան,

Երգերուդ մէջ՝ այնքան ճերմակ:

Այնքան ճերմակ, այնքան գունատ,

Աղու այնքան,

Որ Լուսինն է յուսահատ,

Լըռութիւնը՝ անընթ այնքան:

\*

Ծառերուն տակ... հովն ալ հոն է,

Այնքան բարի, այնքան հանդարտ.

Երկինք մը ծուխ կը թռցնէ

Այնքան հանդարտ,

Որ, սահուելով ուղեշներէն,

Երգերուդ հետ, ծըւէն ծըւէն,

Կը բարձրանայ՝

Դէպի լուսինն այնքան բարակ,

Այնքան բարակ...:

Փոխանակ իմ կարծիքս յայտնելու այս ոտանաւորի մասին ես բարւոք եմ համարում բերել այստեղ շնորհալի երգիծաբան Երուանդ Թօլայեանի նմանողութիւնը,\*) որով ամեն են ինչ առած կլինինք:

\*) Տե՛ս Մանգումիի էֆրեար, 1908, թիւ 2094:

«Դարուս ամէնէն գերահանճար ու տաղանդաւոր բանաստեղծն է Միսաք Մեծարենց, ասում է Թօլայեանը, անկէ վերջը կուգայ Վահրամ Թաթուլ, ուրիշ բացատրութիւնով... Միսաք Մեծարենցի եամախը, որուն «ձայնին մէջ լուսաւոր շարժումներ կը լսուին»:

Իրարմէ հասկնալի ոտանաւորներ կը գրէ այս տղան ամէն ատեն, որոնք գլուխ գործոցներ են «կապոյտ երգի եւ հոսաւէտ իմացականութեան»:

Խորհրդապաշտ բանաստեղծ մըն է անիկա, որուն քերթուածները կրնան իբր մէյմէկ հանելուկներ առաջարկուիլ Հանրագիտակի ընթերցողներուն, հանելուկը լուծողին ուզածնիդ առաջարկելով իբր նուէր, քանի որ վստահ էք թէ ոչ ոք պիտի կրնայ լուծել զանոնք:

Արդ, Վահրամ Թաթուլ անցած շարժու ոտանաւոր մը գրած էր Լոյսի մէջ, ուրկէ

Բան մը չհասկցայ ես:

Ընթերցողներն ալ բան մը չհասկցան, գրաշարներն ալ: Ինք ալ բան մը չէր հասկցեր:

Խմբագրապետը չի գիտեր թէ պէտք է հասկցած ըլլայ:

Ամէն պարագայի մէջ Վ. Թաթուլի հետևողութեամբ ես ալ գրեցի բան մը ուրկէ բան մը հասկցողներուն կը խոստանամ քսան տարուան Մանգումէ, յիսուն տարուան Լոյս, հարիւր հատ ոսկի ժամացոյց, հեծանիւ մը, օթոմոպիլ մը, շոգեկառք մը, շոգենաւ մը, և այլն:

### «Ծառերուն տակ»

Վահրամ Թաթուլ բանաստեղծին

Ծառերուն տակ, հովն ալ հոն է,

Ա՛յնքան բարակ,

Երկինք տասնոց կը տարտղնէ,

Ա՛յնքան բարակ,

Եւ պամպարակ,

Ծովն ալ հոն է, կո՛ւկն ալ հոն է,

Ա՛յնքան բարակ,

Ե՛ղն ալ հոն է, է՛շն ալ հոն,

Ա՛յնքան քուրիկ,

Ա՛յնքան քուրիկ իմ երազիս,

Մահոյիկ մը խորհուրդն ալ հոն

Ա՛յնքան բարակ, ու աւանակ

Կը սօղոսդի գիշերին մէջ,

Ա՛յնքան բարակ ու իշու ձագ,

Ու երկինքը որուն արծաթը կապտորակ

Կը ճորճորի անքան բարակ,

Ա՛յնքան բարակ և պամպարակ,

Թուշիդ շուրջ, ո՛վ Տիւլիոնէս,

Թուշիկիդ շուրջ համակ ձիւնէ,

Մեհեւանդ մը, — ով փիսութիւն —

Մեհեւանդ մը, անքան հաստիկէ,

Ա՛յնքան բարակ,

Ձքնադ՝ ինչպէս պամպարակ,

Ա՛յնքան բարակ, անքան հաստիկէ, հաստուքարակ

Որ լուսթիւնն է ահա՛ որ

Անձնասպան կ'ըլլայ,

Հաստիկէ, ճերմակ,

Ու Պամպարակ,

Յառերու տակ . . . մուկն ալ հոն է,

Ա՛յնքան բարի, անքան հաստիկէ,

Կատուն որ ծուխ կը փախցնէ,

Ա՛յնքան բարակ

Որ կախուելով իր պոչիկէն

Երգերուդ հետ ծուէն ծուէն

Կը բարձրանայ.

Դէպի այերն անքան բարակ

Ու պամպարակ . . .

Բան մը հասկըցա՞ք-

\*

Կը ցաւիմ որ ամէն մարդ չհասկցաւ այս քերթուածիս բարձր նշանակութիւնը:

Խորհրդապաշտ բանաստեղծութիւնն ըրի այսօր պարոններ:

Եւ որովհետեւ ապագան խորհրդապաշտ բանաստեղծութեանն է փափաքեցայ տակաւ վարժեցնել իմ ընթերցողներս անոր։

Եթէ գրածէս բան մը չհասկցար, յանցանքը ոչ իմս է, ոչ ալ Վահրամ Թաթուլի։

Այս գրականութեան սկզբունքն է չհասկացուիլ։

Եւ երբ հասկցուի, կը դադրի ալ գրականութիւնը լլալէ։

Երկու ձեռքով ստորագրում եմ Թօլայեանի ասածի տակ . . . .

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

